ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր՝ 23.10.2017թ. Ե-1/115 գրության, տեղեկացվում է.

Մանուշյան փողոցի հ.86 հասցեի դիմաց, քաղաքացի Անուշ Ղազարյանի կողմից, առանց համապատասխան թույլտվության, փաստացի իրականացվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ապօրինի տիրապետում՝ ճանապարհի երթևեկելի մասի մի հատվածի հողի նիշի իջեցմամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի հատկանիշների համաձայն՝ իրավախախտման փաստի կապակցությամբ աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից դեռևս 06.10.2017թ. կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ հ.026457 արձանագրությունը՝ իրավախախտողին վարչական պատասխանատվության ենթարկելու համար և ձեռնարկված համապատասխան միջոցների արդյունքում՝ վերոնշյալ քանդված հատվածում կատարվել է հողի լիցք: Վերոնշյալ տարածքը լիարժեք վերականգնելու համար քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի կողմից համապատասխան գրությամբ պահանջ է ներկայացվել քաղաքացի Անուշ Ղազարյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ